ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«26» դեկտեմբերի 2017 թվականի № 162-Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՎԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2012թ նոյեմբերի 1-ի N 1431-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ և ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերության 2017թ հոկտեմբերի 26-ի դիմումը, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2017թ դեկտեմբերի 12-ին տրված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» ԲՓ-111 դրական եզրակացությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերությանը 3 տարի ժամկետով տրամադրել նավթի և բնական գազի ուսումնասիրության արտոնագիր թիվ ԵՀՈՒԱ-29/005՝ ՀՀ 1-ին և 3-րդ պայմանական տարածքում.

1-ին պայմանական տարածք՝

Կետ A 40° 40' հյուսիսային լայնություն և Հայաստան Թուրքիա սահմանի հետ հատման կետ

Կետ B 44° 45' արևելյան երկայնության և 40° 40'_ հյուսիսային լայնություն

Կետ C 44° 45' արևելյան երկայնության և Վրաստանի սահմանի հետ հատման կետ

Կետ D Հայաստան-Վրաստան-Թուրքիա սահմանի հատման կետ:

3-րդ պայմանական տարածք՝

Կետ B 44° 45' արևելյան երկայնության և 40° 40' հյուսիսային լայնություն

Կետ C 44° 45' արևելյան երկայնության և Վրաստանի սահմանի հետ հատման կետ

Կետ E 45° 22' 30" արևելյան երկայնության և 40° 40' հյուսիսային լայնություն

Կետ F Հայաստան-Վրաստան-Ադրբեջան սահմանի հատման կետ:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում գրավոր ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ՀՀ տարածքի նավթի և բնական գազի երկրաբանական

ուսումնասիրության և արտադրանքի բաժանման պայմանագրերը իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի /արտոնագիր, պայմանագրեր/ փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետում պայմանագրերը իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու, ինչպես նաև սույն հրամանի 1-ին կետի պայմանը չապահովելու դեպքում, ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը նավթային գործունեության իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ